



**«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
Կայուն Եկամտային Ֆոնդ**

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՏԱՑՎԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2016Թ.
ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՏԱՑՎԱԾ ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ՝ ԱՌ 31 ՄԱՐՏԻ 2016Թ.	3
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԿԱԽՍԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՏԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2016Թ. ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՌԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ	5
2016Թ. ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՌԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՏԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԿԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....	6
1. ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....	6

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՏԱՑՎԱԾ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ` ԱՌ 31 ՄԱՐՏԻ 2016Թ.

ՀՀ դրամով	ԱՎՏԻՎՆԵՐ	
	2016թ. մարտի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցներ, զուտ	0.00	0.00
Ավանդներ	64,785,808.22	89,135,346.85
Ֆինանսական գործիքներ	215,273,633.11	181,100,710.36
Բաժնետոմսեր և համանման արժեթղթեր	0.00	0.00
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման արժեթղթեր	0.00	0.00
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման արժեթղթեր	0.00	0.00
Պարտատոմսեր և համանման արժեթղթեր	190,280,368.35	157,515,595.82
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող պարտատոմսեր կամ համանման արժեթղթեր	190,280,368.35	157,515,595.82
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող պարտատոմսեր կամ համանման արժեթղթեր	0.00	0.00
Վարկային գործիքներ	0.00	0.00
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման գործիքներ	0.00	0.00
<i>Պայմանագրային վարկային գործիքներ (արժեկտրոններ)</i>	<i>0.00</i>	<i>0.00</i>
<i>Այլ վարկային գործիքներ</i>	<i>0.00</i>	<i>0.00</i>
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման գործիքներ	0.00	0.00
Հավաքական ներդրումային գործիքներ	24,993,264.76	23,585,114.54
Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումային գործիքներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլընտրանքային ներդրումային ֆոնդեր կամ դրանց համարժեքներ այլ երկրներում	24,993,264.76	23,585,114.54
Ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլ ֆոնդեր կամ դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում	0.00	0.00
Ընդհանուր նշանակության պրոֆեսիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման կազմակերպություններ	0.00	0.00
Այլ պրոֆեսիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ	0.00	0.00
Այլ ոչ եվրոպական կազմակերպություններ	0.00	0.00
Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով	0.00	0.00
Փոխառություններ` հետվաճառքի գործարքների ներքո արժեթղթերի ձեռքբերման համար	0.00	0.00
Վարկեր` փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց	0.00	0.00
Փոխառնված արժեթղթեր	0.00	0.00
Հետզման գործարքների ներքո թողարկողի վաճառված արժեթղթեր	0.00	0.00
Այլ ժամանակավոր գործարքներ	0.00	0.00
Հեջավորման գործիքներ	0.00	0.00
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ	0.00	0.00
Այլ հեջավորման գործիքներ	0.00	0.00
Այլ ֆինանսական գործիքներ	0.00	0.00
Դեբիտորական պարտքեր	0.00	0.00
Արժույթային ֆորվարդ գործարքներ	0.00	0.00
Այլ	0.00	0.00
Հաշիվներ բանկերում և ֆինանսական կազմակերպություններում	52,264,744.55	26,266,221.67
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	52,264,744.55	26,266,221.67
Ընդամենը ակտիվներ	332,324,185.88	296,502,278.88

ՄԻՋԱՆԿՑԱԼ ԽՏԱՑՎԱԾ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ՝ ԱՌ 31 ՄԱՐՏԻ 2016Թ.

ՀՀ դրամով	ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
	2016թ. մարտի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնակիցներին պատկանող ակտիվներ		
Կապիտալ	321,073,568.46	275,225,783.92
Բաշխման ենթակա տարրերի հատկացում (ա)	0.00	0.00
Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս (ա)	0.00	0.00
Չուտ եկամտին բաշխման ենթակա տարրերի հատկացում (ա,բ)	116,343.00	(301,293.99)
Չուտ շահույթ (ա,բ)	10,735,710.89	21,029,463.30
Մասնակիցներին պատկանող զուտ ակտիվներ (զուտ ակտիվներ)	331,925,622.35	295,953,953.23
Ֆինանսական գործիքներ	0.00	0.00
Ֆինանսական գործիքների փոխանցումներ	0.00	0.00
Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով	0.00	0.00
Հետզնման գործարքների ներքո վաճառված արժեթղթերով վճարման ենթակա գումարներ	0.00	0.00
Փոխանված արժեթղթերի գծով վերադարձման ենթակա միջոցներ	0.00	0.00
Այլ ժամանակավոր գործարքներ	0.00	0.00
Հեջավորման գործիքներ	0.00	0.00
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ	0.00	0.00
Այլ հեջավորման գործիքներ	0.00	0.00
Կրեդիտորական պարտավորություններ	398,563.53	548,325.65
Արժուրային ֆորվարդ գործարքներ	0.00	0.00
Այլ պարտավորություններ	398,563.53	548,325.65
Հաշիվներ բանկերում և ֆինանսական կազմակերպություններում	0.00	0.00
Կարճաժամկետ վարկեր	0.00	0.00
Ստացված վարկեր	0.00	0.00
ԸՆդամենը պարտավորություններ	332,324,185.88	296,502,278.88


(ա) ներառյալ ճշգրտումները

(բ) հանած ֆինանսական տարվա ընթացքում վճարված միջանկյալ բաշխումները

Հաստատված է հրապարակման համար 2016թ. մայիսի 3-ին

Ֆիլիպ Ծուրն

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործադիր տնօրեն



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՆԱԽՍԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՏԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2016թ. ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՌԱՄՅՅԱ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

	2016թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. մարտի 31-ն ընկած ժամանակաշրջան	2015թ. հունվարի 1-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան
ԳՅ դրամով		
Եկամուտներ ֆինանսական գործառնությունների գծով		
Եկամուտներ ավանդներից և բանկերում և ֆինանսական կազմակերպություններում հաշիվներից	5,762,282.19	5,200,302.53
Եկամուտներ բաժնետոմսերից և համանման արժեթղթերից	0.00	0.00
Եկամուտներ պարտատոմսերից և համանման արժեթղթերից	5,618,281.90	13,428,213.30
Եկամուտներ վարկային գործիքներից	0.00	0.00
Եկամուտներ արժեթղթերի ժամանակավոր ձեռքբերումից և օտարումից	0.00	0.00
Եկամուտներ հեջավորման գործիքներից	0.00	0.00
Այլ ֆինանսական եկամուտներ	0.00	0.00
Ընդամենը (1)	11,380,564.09	18,628,515.83
Վճարներ ֆինանսական գործառնությունների գծով		
Վճարներ արժեթղթերի ժամանակավոր ձեռքբերման և օտարման գծով	0.00	0.00
Վճարներ հեջավորման գործիքների գծով	0.00	0.00
Վճարներ ֆինանսական պարտավորությունների գծով	(458.20)	526.32
Այլ ֆինանսական վճարներ	0.00	0.00
Ընդամենը (2)	(458.20)	526.32
Չուտ եկամուտ ֆինանսական գործառնություններից (1 - 2)	11,381,022.29	18,627,989.51
Այլ եկամուտ (3)	0.00	0.00
Կառավարման վճարներ և մաշվածության հատկացումներ (4)	841,323.07	2,466,825.58
Ժամանակաշրջանի զուտ եկամուտ (S.214-17-1) (1-2+3-4)	10,539,699.22	16,161,163.93
Հասույթի ճշգրտում (5)	196,011.67	4,868,299.37
Ժամանակաշրջանի ընթացքում վճարված զուտ եկամտի միջանկյալ բաշխում (6)	0.00	0.00
Չուտ շահույթ (1 - 2 + 3 - 4 + 5 + 6)	10,735,710.89	21,029,463.30

Հաստատված է հրապարակվելու համար 2016թ. մարտի 3-ին

Ֆիլիպ Ռևսո
Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործադիր տնօրեն



«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Կայուն Եկամտային Ֆոնդ
2016թ. մարտի 31-ին ավարտված ժամանակաշրջանի
միջանկյալ խտացված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2016Թ. ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՌԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՏԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՈՄԱՆ ՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Միջանկյալ խտացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն: Միջանկյալ խտացված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Այլընտրանքային զուտ կապիտալի 2014-1 կանոնակարգով (ANC Regulation) նախատեսված ձևաչափով, որի ընդունումից հետո չեղարկվել է Կապիտալի շուկաների և արժեթղթերի (CRC Regulation) 2003-02 կանոնակարգը: Այս կանոնակարգը սահմանում է փոխադարձ ներդրումային ֆոնդերի համար Նոր՝ այլընտրանքային ներդրումային ֆոնդի մենեջերի դասակարգումը, սակայն չի փոփոխում կիրառելի հաշվապահական հաշվառման ստանդարտները կամ ակտիվների և պարտավորությունների գնահատման մեթոդները:

Ինչպես նշված է Ֆրանսիական հաշվապահական հաշվառման ստանդարտների (ANC) լիազոր մարմնի ներածական ծանուցման մեջ, փոխադարձ ներդրումային ֆոնդերի տողի բաշխվածությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում փոփոխվել է հետևյալ կերպ՝

- «Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումային գործիքներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և ոչ պորտֆելիոնալ ներդրողների համար նախատեսված այլընտրանքային ներդրումային ֆոնդեր կամ դրանց համարժեքներ այլ երկրներում» ենթատողը համապատասխանում է նախկին «Կորորդինացված Եվրոպական UCITS և ընդհանուր նշանակության ֆրանսիական UCITS» ենթատողին:
- «Ոչ պորտֆելիոնալ ներդրողների համար նախատեսված այլ ֆոնդեր կամ դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում» ենթատողը համապատասխանում է նախկին «որոշակի ներդրողների համար պահվող հավաքական ներդրման գործիքներ փոխանցելի արժեթղթերում – վենչուրային կապիտալի ֆոնդեր – ֆյուչերսային ֆոնդեր» ենթատողին:
- «Ընդհանուր նշանակության պորտֆելիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման կազմակերպություններ» ենթատողը համապատասխանում է նախկին «ներդրումային ֆոնդեր և ցուցակված հատուկ նպատակային գործիքներ (SPV)» ենթատողին:
- «Այլ պորտֆելիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ» ենթատողը համապատասխանում է նախկին «ներդրումային ֆոնդեր և չցուցակված հատուկ նպատակային գործիքներ (SPV)» ենթատողին:
- «Այլ ոչ եվրոպական կազմակերպություններ» ենթատողը ներդրվել է 2014-01 կանոնակարգով:

Կիրառելի են հաշվապահական հաշվառման հետևյալ համընդհանուր սկզբունքները, մասնավորապես՝

- արժանահավատ ներկայացում, համեմատականություն, գործունեության անընդհատություն
- բարեխիղճ գործունեություն և վստահելիություն
- ողջամտություն,
- կիրառվող մեթոդների չփոփոխելը մեկ ժամանակաշրջանից մյուսը առանց համապատասխան ներկայացման:

Կայուն եկամտաբերությամբ արժեթղթերից հասույթը ճանաչվում է փաստացիորեն ստացված տոկոսային հիմունքով: Արժեթղթերի ձեռքբերումները և օտարումները ճանաչվում են ինքնարժեքով:

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ):

Հաշվետվություններում ներկայացված հաշվետու ժամանակաշրջանը 2016թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. մարտի 31-ն ընկած ժամանակաշրջանն է:

Ֆոնդի կառավարիչն է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն: Ֆոնդի ադմինիստրավորումը պատվիրակվել է «ԿԱՍԵԻՍ Ֆանդ ադմինիստրեյշն» բաժնետիրական ընկերությանը (CACEIS Fund Administration): Ֆոնդի պահառու և մասնակիցների ռեեստրավարը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն է:

Ակտիվների գնահատման կանոնները

Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են պատմական արժեքով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում իրենց ներկա արժեքով, որն իրենց վերջին հասանելի շուկայական արժեքն է, կամ շուկայի բացակայության դեպքում արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքի միջև տարբերությունները որոշվում են վերը նշված եղանակով և նրանց սկզբնական պատմական արժեքը ճանաչվում է հաշվետվություններում որպես գնահատումներում փոփոխություն: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առջուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են համաձայն վերը նշված եղանակի և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

Ավանդներ

Ավանդները գնահատվում են զծային մեթոդով:

Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առջուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր,

**«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Կայուն Եկամտային Ֆոնդ
2016թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջանի
միջանկյալ խտացված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

պարտատոմսեր և այլ արժեթղթեր

Չուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են տվյալ օրվա շուկայի փակման դրությամբ գործող գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի գծով հաշվեգրված տոկոսը հաշվարկվում է մինչև ակտիվի գնահատման ամսաթիվը:

Պետական կարճաժամկետ պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի տվյալ օրվա հրապարակած փոխարժեքը:

Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր

Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին եական գործարքներում օգտագործված գները:

Պայմանագրային վարկային գործիքներ (արժեկտրոններ)

Պայմանագրային վարկային գործիքները, որոնք ակտիվորեն առքուվաճառքի չեն ենթարկվում Եական գումարներով, գնահատվում են ակտուարային սկզբունքով՝ ստորև նշված ամսաթվերով, գումարած՝ թողարկողի առանձնահատուկ բնութագրերը ներկայացնող լրացումները:

Մեկ տարի կամ պակաս ժամկետայնությամբ արժեկտրոնները գնահատվում են Եվրոյի միջբանկային առաջարկի գնով (Euribor):

Մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ արժեկտրոնները գնահատվում են միջնաժամկետ տոկոսակիր զանձապետական պարտատոմսերի գերիշխող փոխարժեքով կամ, ավելի երկարաժամկետ արժեկտրոնների համար (BTAN)՝ կարճաժամկետ կտրվածքով փոխարկելի զանձապետական պարտատոմսերի (OAT) փոխարժեքով:

Երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ պայմանագրային վարկային գործիքները կարող են գնահատվել գծային մեթոդով:

Արժեկտրոնային պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի տվյալ օրվա հրապարակած փոխարժեքը:

Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS)

UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքով:

Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով

Հետվաճառքի գործարքների ներքո պահվող արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում՝ «Կարկեր» փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց» տողում՝ պայմանագրում նշված գնով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսը:

Հետգնման գործարքների ներքո թողարկողին վաճառված արժեթղթերը հաշվառվում են գնման պորտֆելում իրենց ընթացիկ արժեքով: Համապատասխան պարտավորությունը հաշվառվում է վաճառքի պորտֆելում՝ պայմանագրում նշված գնով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսը:

Փոխառությամբ տրված արժեթղթերը գնահատվում են իրենց ընթացիկ արժեքով և հաշվառվում «Կարկեր» փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց» տողում:

Փոխառնված արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում՝ «Փոխառնված արժեթղթեր» տողում՝ պայմանագրում նշված գնով, և պարտավորություններում՝ «Հետգնման գործարքների ներքո վաճառված արժեթղթերով վճարման ենթակա գումարներ» տողում՝ պայմանագրում նշված գնով, գումարած վճարվելիք հաշվեգրված տոկոսը:

Հեջավորման գործիքներ

Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ

Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման հեջավորման գործիքները գնահատվում են օրվա հաշվարկային գնով:

Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման հեջավորման գործիքներ

Սվոփեր

Փոխարժեքային սվոփերը և/կամ ֆորվարդային արժութային գործարքները գնահատվում են իրենց շուկայական արժեքով՝ շուկայում գործող տոկոսադրույթների (և/կամ փոխարժեքների) ապագա տոկոսային հոսքերի գերշմամբ հաշվարկված գնով: Այս գինը ճշգրտվում է դեֆոլտի ռիսկը հաշվի առնելու համար:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ Կայուն եկամտային ֆոնդ
2016թ. մարտի 31-ին ավարտված եռամսյա ժամանակաշրջանի
միջանկյալ խտացված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ինդեքսային սվոփերը գնահատվում են ակտուարային սկզբունքով կոնտրագենտի կողմից տրամադրված փոխարժեքի հիման վրա: Այլ սվոփերը գնահատվում են իրենց շուկայական արժեքով կամ գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից սահմանված եղանակով:

Արտահաշվեկշռային պարտավորություններ

Ֆիքսված հեջային պայմանագրերը ներկայացվում են «Արտահաշվեկշռային պարտավորություններ»-ում իրենց շուկայական արժեքով՝ պորտֆելում կիրառված փոխարժեքով:

Պայմանական հեջավորման գործիքները փոխարկվում են իրենց համապատասխան համարժեքներով:

Ավոփ գործարքները հաշվառվում են անվանական արժեքով կամ դրան համարժեք արժեքով, եթե առկա չէ անվանական արժեք:

Կառավարման վճարներ

Կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա: Այս պարգևավճարները ներկայացվում են ֆոնդի եկամուտների և ծախսերի հաշվետվությունում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի վճարը և Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարը: Կառավարման վճարները չեն ներառում դիվիդենդի ծախսերը: Կառավարչի պարգևավճարը հաշվարկվում է 1.0%-ի չափով, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը:

Չուտ շահույթի բաշխումը

Ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) ներառում է տոկոսների, պարտքի, պարգևավճարների, հատկացումների, շահաբաժինների ամբողջականությունը, զումարած՝ կանխիկ եկամուտը, հանած կառավարման վճարները և ֆինանսական ծախսերը: Զբաղադրված կամ իրացված կապիտալի հավելածից օգուտները կամ կապիտալի գծով վնասները չեն դիտարկվում որպես հասույթ, ինչպես նաև որպես այդպիսին չեն դիտարկվում թողարկման/մարման վճարները:

Բաշխման համար հասանելի գումարներն են՝ ժամանակաշրջանի զուտ շահույթը զումարած հաջորդ ժամանակաշրջան փոխանցված միջոցները, հանած կամ զումարած հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հասույթի ճշգրտման հաշիվների մնացորդները:

Ժամանակաշրջանի ընթացքում թողարկված փայերի հավասարեցում

Հասույթի ճշգրտում

Բոլոր փայատերերը պետք է ստանան մեկ փայի դիմաց բաշխման ենթակա հավասարաչափ եկամուտ, անկախ փայի թողարկման ամսաթվից: «Հասույթի ճշգրտում» տողում ներկայացված ուղղիչ մեխանիզմի միջոցով չեզոքացվում է թողարկումների և մարումների ազդեցությունը մեկ փայի դիմաց ստացվող եկամտի վրա: Ակտիվի զուտ արժեքը հաշվարկելիս Ֆոնդը որոշում է բաշխման ենթակա եկամուտը: Թողարկումները կամ մարումները ազդեցություն չեն գործում փայերի կատարողականի վրա: Հասույթի ճշգրտման մեխանիզմն ապահովում է թողարկումների և մարումների չեզոքություն մեկ փայի դիմաց բաշխման ենթակա եկամտի գծով: